

Սուպեր եռանկյուն

Հարթության մեջ տրված են N տարբեր կետեր, որոնցից ցանկացած երեքը մեկ ուղղի վրա չեն գտնվում: Կասենք, որ տրված կետերից որևէ երեք կետերով կազմված եռանկյունը սուպեր-եռանկյուն է, եթե այդ եռանկյան ներսում ընկած կետերի քանակը ամենաշատն է: Համարում ենք, որ կողմերի վրա ընկած կամ գագաթների հետ համընկնող կետերը պատկանում են եռանկյանը:

Գրեք ծրագիր, որը տրված կետերի համար հաշվի սուպեր-եռանկյանը պատկանող կետերի քանակը:

Մուտքը

Առաջին տողում տրված է N բնական թիվը, $3 \leq N \leq 300$: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրը պարունակում է երկու ամբողջ թիվ՝ հերթական կետի կոորդինատները:

Ելքը

Ելքում պետք է արտածել սուպեր-եռանկյան մեջ ընկած կետերի քանակը:

Օրինակ

Մուտքը.

6
1 3
2 3
2 1
3 1
3 2
4 4

Ելքը.

5